NCDC

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

ՕԳՈՍՏՈՍ 2018 թ.

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՍՆՆԴԱՅԻՆ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ

2018թ. օգոստոս ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են տիֆեր, պարատիֆեր, կատաղություն, խոլերա, ռիկետցիոզներ, փայտացում, դիֆթերիա, սուր պոլիոմիելիտ:

Հատուկ վտանգավոր վարակներ

<u>Բրուցելոզ</u>



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետությունում 2017-2018 թթ հունվար-օգոստոս ժամանակահատվածում արձանագրված բրուցելոզի դեպքերը

Գծապատկերի տվյալները վկայում են այն մասին, որ հանրապետությունում 2018թ. օգոստոսի ընթացքում արձանագրված բրուցելոզ հիվանդության դեպքերը համեմատած 2017թ. նույն ժամանակահատվածի հետ նվազել են՝ 2.6 անգամ, իսկ նախորդ ամսվա հետ՝ աճել 1.3 անգամ: 2018թ. օգոստոսի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է բրուցելոզի 16 դեպք, որից 3-ը՝ Երևան քաղաքում, 3-ը՝ Սյունիքի, 3-ը՝ Արարատի, 3-ը՝ Վայոց Ձորի, 2-ը՝ Արագածոտնի, 1-ը՝ Արմավիրի, 1-ը՝ Գեղարքունիքի մարզերում: Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու համար:

Աղիքային վարակիչ հիվանդություններ

Հայաստանի Հանրապետությունում 2018թ. օգոստոս ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 1602 դեպք, որից 506 դեպքն արձանագրվել է Երևան քաղաքում, 1096-ը՝ մարզերում: 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ աղիքային վարակներով հիվանդացությունը աճել է մոտ 1.2 անգամ: Հիվանդացության աճը հիմնականում բացատրվում է օգոստոս ամսին հաստատված խիստ շոգ եղանակով: Հիվանդացության աճ արձանագրվել է ինչպես Երևան քաղաքում (1.25 անգամ), այնպես էլ մարզերում (1.14 անգամ):

Միևնույն ժամանակ հունվար-օգոստոս ժամանակահատվածում աղիքային վարակներով հիվանդացությունը 1.14 անգամ աճել 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ (դեպքերի թիվը աճել է 925-ով):



Գծապատկեր 2. Աղիքային վարակների հիվանդացությունը 2017-2018թթ. հունվար ամսից օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում

2018թ. հուլիս ամսվա համեմատ (1552 դեպք) օգոստոս ամսին աղիքային վարակիչ հիվանդությունների դեպքերի թիվը աճել է 50-ով:

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխարգելելու նպատակով:

2018թ. օգոստոս ամսին Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 2 բռնկում:

2018թ. օգոստոսի 5-ից 22-ն ընկած ժամանակահատվածում **Գեղարքունիքի մարզի Սարուխան** համայնքում արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկում: Հիվանդների թիվը կազմել է 37, որից 24-ը մինչև 18 տարեկան է: Հիվանդների լաբորատոր հետազոտությունների արդյունքում 4-ի մոտ հայտնաբերվել է շիգելա:

Համաճարակաբանական հետազոտությունից պարզվել է, որ դեպքերը հիմնականում տեղակայված են գյուղի սկզբնամասում և Սարուխանի թիվ 2 մանկապարտեզի թաղամասում: Միաժամանակ պարզվել է նաև, որ այս թաղամասերում հուլիսի կեսերից գյուղի բնակիչների կողմից ինքնակամ եղել են ջրանջատումներ, բնակիչները խմելու ջուրն անջատել են փականներից և օգտագործել ոռոգման նպատակով, ինչի հետևանքով համայնքի թաղամասերը օրերով ջրազրկվել են, սա կարող էր լինել պատճառ, ինչպես խմելու ջրի աղտոտման, այնպես էլ ջուր չլինելու պատճառով սանիտարահիգիենիկ պայմանների խախտման հետևանքով աղիքային վարակների առաջացման և տարածման:

Համաճարակաբանական հետազոտությունների ընթացքում բոլոր ընտանեկան օջախներում իրականացվել են հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ, օջախների եզրափակիչ ախտահանում:

2018թ. հուլիսի 27-ից օգոստոսի 28-ն ընկած ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզի Վարդենիկ համայնքում արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկում: Հիվանդների ընդհանուր թիվը կազմել է 29: Հիվանդների լաբորատոր հետազոտությունների արդյունքում 2 հիվանդի մոտ հայտնաբերվել է Shigella, 2- ի մոտ հաստատվել է վիրուսային վարակ, 1 հիվանդի մոտ՝ Shigella, Campillobacter և էնտերովիրուս, 3-ի մոտ՝ այլ աղիքային վարակներ:

Վարդենիկ համայքում արձանագրված բռնկման կապակցությամբ իրականացված համաճարակաբանական հետազոտությունների ընթացքում բոլոր ընտանեկան օջախներում իրականացվել են հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ, օջախների եզրափակիչ ախտահանումներ:

Օդակաթիլային վարակներ

<u>Գրիպ և Սուր շնչառական վարակ</u>

2018թ. օգոստոս ամսին սուր շնչառական վարակներով՝ (այսուհետ ՍՇՎ), պայմանավորված ակտիվություն չի գրանցվել: ՍՇՎ դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են 1 անգամ: 2018թ. հուլիսի ընդհանուր ցուցանիշը համեմատած 2017թ. նույն ժամանակահատվածի հետ աճել է 1.4 անգամ, 2016թ. հետ համեմատած՝ 1.6 անգամ, պայմանավորված հանրապետությունում շրջանառող սուր շնչառական վարակների հարուցիչներով: Առավել շատ դեպքեր շարունակվում են արձանագրվել են 0-4տ երեխաների շրջանում:



Գծապատկեր 3. 2017-2018 թթ. հոկտեմբեր – օգոստոս ամիսների ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակների ցուցանիշն ըստ ամիսների 100 000 բնակչի հաշվարկով

Օգոստոսի ընթացքում, գրիպի դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, գրիպանման հիվանդություններից և ծանր սուր շնչառական վարակներից հետազոտվել է 26 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում արձանագրվել է ռինովիրուսի 2 դեպք, ադենովիրուսի 2 դեպք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել են 1 դեպք պարագրիպ, 1 դեպք ռինովիրուս, 1 դեպք ռեսպիրատոր սենտիցիալ վիրուս:

Օդակաթիլային այլ վարակներ (ջրծաղիկ, քութեշ, վարակային մոնոնուկլեոզ)

<u>Ջրծաղիկ</u>



Գծապատկեր 4. Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018 թթ հունվար-օգոստոս ժամանակահատվածում արձանագրված ջրծաղկի դեպքերը

Համաձայն վերլուծության տվյալների՝ 2018թ. օգոստոսին արձանագրված ջրծաղկի դեպքերը նախորդ ամսվա համեմատ նվազել են 3.3 անգամ, 2017թ նույն ժամանակահատվածի հետ՝ 1.3 անգամ: Կազմակերպ օջախներում ևս նկատվել է դեպքերի նվազում՝ կապված արձակուրդների հետ: Առավել շատ դեպքեր են գրանցվել Հայաստանի հետևյալ մարզերում՝ Կոտայքի և Տավուշի մարզերում՝ 17-ական դեպք, Արարատի մարզում՝ 12 դեպք, Շիրակի մարզում՝ 33 դեպք, Լոռու մարզում՝ 24 դեպք Երևան քաղաքում՝ 96 դեպք: 2018թ. օգոստոս ամսվա ժամանակահատվածում հղիների շրջանում արձանագրվել է հիվանդության 2 դեպք: Տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԱՆ մոր և մանկան վարչություն:

Ընտանեկան և կազմակերպ օջախներում հնարավորության սահմաններում առաջին դեպքերը մեկուսացվել են և հսկողություն է սահմանվել հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:

Քութեշ



Գծապատկեր 5.Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018 թթ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում արձանագրված քութեշի դեպքերը

Գծապատկերի տվյալները վկայում են այն մասին, որ 2018թ. օգոստոսին արձանագրված քութեշի դեպքերը համեմատած նախորդ ամսվա հետ նվազել են 1.3 անգամ, 2017թ. նույն ժամանակահատվածի հետ՝ աճել 1.3 անգամ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 3-6 տարեկան երեխաների շրջանում՝ 19 դեպք, ինչը կազմում է ընդամենի 63.3%-ը: Բոլոր դեպքերն ենթարկվել են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հնարավոր վարակի աղբյուր հանդիսացող հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, կանխելով վարակի հետագա տարածումը:

Վարակային մոնոնուկլեոզ



Գծապատկեր 6. Հայաստանի Հանրապետությունում 2017 և 2018թթ հունվար-օգոստոս ժամանակահատվածում արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը

Ինչպես երևում է գծապատկերից 2018թ. հուլիսին արձանագրված մոնոնուկլեոզի դեպքերը նախորդ ամսվա համեմատ նվազել են՝ 1.4 անգամ, իսկ 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ աճել 1.4 անգամ: Օգոստոսի ընթացքում արձանագրվել է մոնոնուկլեոզի 46 դեպք, որից 43-ը՝ 0-18 տարեկան երեխաների շրջանում:

Իմունականխարգելում

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: Գրանցվել է կապույտ հազի 12 դեպք՝ չպատվաստած և թերի պատվաստված երեխաների շրջանում:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը մարտ ամսին կազմել է 89% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 91,1% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 95.6% (նպատակային ցուցանիշը՝ 90%):

Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ

Սույն թվականի օգոստոս ամսին արձանագրվել է արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի 4 դեպք: Վարակման հավանական պատճառները և ուղիներն են՝ ինվազիվ միջամտություններ՝ բժշկական և ոչ բժշկական կազմակերպությունում (ատամնաբուժական ծառայություն, դաջվածք), սեռական ուղի:

Հայաստանի Հանրապետությունում օգոստոս ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արտաընդերային սուր վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը աճել է 2 անգամ:

Սննդային թունավորումներ

Հանրապետության տարածքում օգոստոս ամսին արձանագրվել է սննդային թունավորման 5 դեպք՝ 7 տուժածով, առանց մահվան ելքի, որից սնկից թունավորման 4 դեպք՝ 6 տուժածով և այլ մանրէային ծագման սննդային թունավորման 1 դեպք՝ 1 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում արձանագրվել է թունավորման 2 դեպք՝ 2 տուժածով: Սննդային թունավորման դեպքերն արձանագրվել են քաղաք Երևանում, Արագածոտնի, Կոտայքի և Լոռու մարզերում: Սնկից թունավորման պատճառ է հանդիսացել տուժածների կողմից հավաքած սունկը, իսկ այլ մանրէային ծագման սննդային թունավորման պատճառ է հանդիսացել խառը սնունդը: Սննդային թունավորման դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

Քիմիական թունավորումներ

Հայաստանի Հանրապետությունում օգոստոս ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 38.2%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 61.8%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը (44%) առաջացել է թունավոր կենդանիների խայթոցների արդյունքում, 17%-ը՝ դեղամիջոցների՝ ծնողի անուշադրության հետևանքով և ինքնաբուժման նպատակով օգտագործման արդյունքում, 12.4%-ը՝ օրգանական լուծիչներից, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, 16.4%-ն՝ ալկոհոլային թունավորումները՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից, 3.2%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 4.9%-ը՝ թունաքիմիկատների և 2.2%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից:

2017թ. օգոստոս ամիսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կարելի է դիտարկել, որ քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նվազել է 1.2 անգամ: